ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ ------------------------------------

«01» 09 -------------------2023 թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

# ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

# ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Երևանի Հովհաննես Պողոսյանի անվան հ. 82 հիմնական » ՊՈԱԿ

II ա դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Արիստակեսյան Նարինե Մանուկի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2023- 2024 » ուսումնական տարի

*<u>Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները</u>*

*Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)*

II ա դասարանը բաղկացած է 32 աշակերտից՝ 15 տղա և 17 աղջիկ: Դասարանում ընդգրկված ունենք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող մեկ աշակերտ: Աշակերտները հիմնականում կարգապահ են, պարտաճանաչ: Հաճախակի անցկացնում ենք զրույցներ հանդուրժող, համերաշխ կոլեկտիվ ձևավորելու համար :

*Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները*

*Հայեցի դաստիարակություն*

***Հոգևոր դաստիարակություն*** *Խնդիրները՝*

*Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:*

*Կազմակերպել էքսկուրսիաներ և այցելել տարբեր եկեղեցիներ, իմանալ դրանց հետ կապված հետաքրքիր պատմություններն ու ստեղծման ակունքները: Ընթերցել հատվածներ <<Մանկական Աստվածաշնչից>>, լսել հոգևոր երաժշտություն:*

---

---

---

***Գեղագիտական դաստիարակություն***- *Խնդիրները՝*

*Աշակոնյթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում:*

*Այցելել թանգարաններ, ցուցահանդեսներ, տիկնիկային թատրոն, համերգասրահներ , պատմական արժեք ունեցող վայրեր: Անցկացնել զանազան զրույցներ, ընթերցումներ , լսել հեքիաթներ, կազմակերպել քննարկումներ*

***Ռազմահայրենասիրական դաստիարակություն*** *Խնդիրները՝*

*Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք՝ հայ ազատամարտիկների նկատմամբ: Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ:*

*Ճանաչել և իմանալ Հայաստաիի Հանրապետության խորհրդանիշների ՝դրոշի, զինանշանի և օրհներգի մասին: Սովորեցնել օրհներգը և հաճախակի կատարել: Կազմակերպել հանդիպումներ ազատամարտիկներ հետ, ճանաչել ազգային հերոսներին: Զրույցների միջոցով աշակերտների մեջ սերմանել սեր, հագատարություն և նվիրվաշություն հայրենիքի, մեր քաղաքի նկատմամբ:*

***Ֆիզիկական դաստիարակություն*** *Խնդիրները՝*

*Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում:*

*Հաճախակի զրուցել առողջ ապրելակերպի մասին: Խոսել անձնական հիգիենայի, վնասակար սովորությունների և դրանց վատ հետևանքների մասին: Օրվա ռեժիմի, առավոտյան մարզվել ու, սպորտով զբաղվել ու մասին:*

***Աշխատանքային դաստիարակություն*** *Խնդիրները՝*

*Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում:*

*Աշակերտների հետ խոսել տարբեր մասնագիտությունների և արհեստների մասին: Շեշտել դրանց դերի և կարևորության մասին: Քննարկումներ անցկացնել <<Ի՞նչ եմ ուզում դառնալ>>, <<Իմ ծնողների մասնագիտությունը>> և այլ թեմաների շուրջ:*

***Բնապահպանական դաստիարակություն*** *Խնդիրները՝*

*Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում :*

*Զրույցներ անկացնել կենդանական և բուսական աշխարհի կարևորության և բազմազանության մասին: Խոսել, թե ինչպես պետք է պահպանել մեր շրջապատի բուսականությունը, այցելել բնության թանգարան: Աշակերտների տեղյակ պահել բնական աղետներիմասին և ինչպեսի վարք դրսևորել նման իրավիճակներում:*

***Դպրոց-ընտանիք կապը*** *Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց -ընտանիք կապը, որպեսզի ավելի լավ սովորեն:*

*Ամրապնդել դպրոց-ընտանիք կապը հանդիպումների, հեռախոսազրույցների միջոցով: Անցկացնել ծնողական ժողովներ, իրազեկել աշակերտների կարգապահության և առաջընթացի մասին:*

## *ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ*

## ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

| 1-ին կիսամյակ | | 2-րդ կիսամյակ | |
|---|---|---|---|
| Շաբաթվա օրը | դասաժամը | Շաբաթվա օրը | դասաժամը |
| Երեքշաբթի | 6-րդ | | |

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն | Կատարման ամսաթիվ | Կատարվել է |
|---|---|---|---|
| I | Գիտելիքի օր | 05. 09 | |
| II | Զրույց՝ «Օրվա ռեժիմը » թեմայով | 12. 09 | |
| III | Անկախության դերը մեր կյանքում | 19. 09 | |
| IV | Դասարանում վարքագծի կանոնների հաստատում | 26. 09 | |
| V | Բարեկիրթ շփում, հաղորդակցում | 03. 09 | |
| VI | Զրույց՝ «ՈՒսուցիչ» թեմայով | 10. 10 | |
| VII | Հայրենասիրական երգերի ունկնդրում և ուսուցում | 17. 10 | |
| VIII | Զրույց «Իրավունքներ և պարտականություններ» թեմայով | 31. 10 | |
| IX | Ինչու՞ է նոյեմբերը գույնզգույն | 07. 11 | |
| X | Հեքիաթի ունկնդրում | 14. 11 | |
| XI | Զրույց «Մեր բանակը և հերոս զինվորները» թեմայով | 21. 11 | |
| XII | Զրույց՝ «Մեր ընտանիքը» թեմայով | 28. 11 | |
| XIII | Ինչպե՞ս պաշտպանվել բնական աղետներից | 05. 12 | |
| XIV | Պատրաստում ենք տոնածառի խաղալիքներ | 12. 12 | |
| XV | Ամանորյա միջոցառում | 19. 01 | |
| XVI | Զրույց՝ « Հայոց բանակը » թեմայով | 23. 01 | |
| XVII | Արդյունավետ համագործակցություն | 30. 01 | |
| XVIII | Զրույց՝ «Բնություն» թեմայով | 06. 02 | |
| XIX | Գրքերի աշխարհում | 13. 02 | |
| XX | Զրույց «Անվտանգ երթևեկություն» | 20. 02 | |
| XXI | Ինպե՞ս լինել լավ ընկեր | 27. 02 | |
| XXII | Զրույց՝ նվիրված կանանց տոնին | 05. 03 | |
| XXIII | Զրույց՝ « Ով եմ ես» | 12. 03 | |
| XXIV | Զրույց՝ « Ի՞նչ է ազնվությունը» | 19. 03 | |
| XXV | Կոնֆլիկտների հաղթահարում | 02. 04 | |

| | | | |
|---|---|---|---|
| XXVI | Զրույց՝ «Բարեկիրթ շփում» | 09. 04 | |
| XXVII | Հեքիաթի ունկնդրում | 16. 04 | |
| XXVIII | Զրույց՝ «Ժպիտը մարդու կյանքում» թեմայով | 23. 04 | |
| XXIX | Զրույց՝ « Մարդիկ, որոնց հանդիպում եմ իմ կյանքում» | 30. 04 | |
| XXX | Մայիսը հաղթանակների ամիս | 07. 05 | |
| XXXI | Զրույց՝ « Իմ սիրելի կենդանին» թեմայով | 14. 05 | |
| XXXII | Զրույց՝ «Ամենալավ ընկերը» | 21. 05 | |
| XXXIII | | | |
| XXXIV | | | |